

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016

Ստեփանակերտի քաղաքապետարանի
գործունեության

2016 թվականին ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանն իր գործունեությունն իրականացրել է ԼՂՀ Սահմանադրության, «ԼՂՀ շրջաններում պետական կառավարման մասին» ԼՂՀ Նախագահի հրամանագրի և «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքի հիման վրա:

Քաղաքապետարանի 2016 թվականի գործունեության համար գլխավորապես ծրագրային հիմք են հանդիսացել՝

- ԼՂՀ Նախագահի նախընտրական ծրագիրը,
- ԼՂՀ կառավարության գործունեության ծրագիրը,
- ԼՂՀ կառավարության 2016 թվականի գործունեության

միջոցառումների ծրագիրը:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքապետարանի կողմից իրականացվող գործունեությունն ուղղված է եղել բնակչության բարեկեցության բարելավման նպատակով համայնքային նշանակության հարցերի լուծմանը և համայնքի սեփականության տնօրինմանը:

Քաղաքապետարանի կողմից իրականացված միջոցառումները միտված էին օրենքով նախատեսված պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացմանը հետևյալ բնագավառներում՝

- ֆինանսներ,
- քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն,
- հողօգտագործում,
- տրանսպորտ,
- աշխատանք և սոցիալական ծառայություն,
- առևտուր և ծառայություններ,
- հասարակական կարգի պահպանություն,
- պաշտպանություն,
- քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն,
- կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ,
- ֆիզիկական կուլտուրա և սպորտ,
- արտաքին կապեր:

Ֆինանսներ

Ստեփանակերտի քաղաքային համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր մուտքերը կազմել են 1680420.2 հազ.դրամ՝ պլանավորված 1695459.3 հազ.դրամ գումարի 99.1%-ը: Ընդհանուր մուտքերի 23.6%-ը կազմել են սեփական եկամուտները, որոնց գծով պլանավորված 409762.3 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 396498.2 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 96.8%: Նախորդ տարվա համեմատ սեփական եկամուտները աճել են 23197.9 հազ.դրամով:

Շենքերից և շինություններից գանձվող գույքահարկի գծով մուտքերը կազմել են 102562.4 հազ.դրամ՝ նախատեսված 115.0 մլն դրամի 89.2%-ը: Նախորդ տարվա համեմատ մուտքերը աճել են 4494.7 հազ.դրամի չափով (շենքեր և շինությունների մասով 12543.7 հազ.դրամի չափով չվճարված գույքահարկի նյութերը գտնվում են դատարանում): Հողի հարկից գանձվող մուտքերը կազմել են 10729.3 հազ.դրամ՝ պլանավորված 10262.3 հազ.դրամի 104.6%-ը (հողի հարկի մասով 1431.3 հազ.դրամի չափով չվճարված հարկի նյութերը նույնպես գտնվում են դատարանում):

Փոխադրամիջոցներից մուտքագրվել է 160209.5 հազ.դրամի գույքահարկ, որը կազմում է պլանավորված 152.0 մլն դրամի 105.4%-ը: Նախորդ տարվա համեմատ այն աճել է 32206.8 հազ.դրամի չափով (փոխադրամիջոցների մասով՝ 9084.8 հազ.դրամի չափով չվճարված գույքահարկի նյութերը գտնվում են դատարանում):

Տեղական տուրքերի գծով մուտքագրվել է 60306.1 հազ.դրամ, որը կազմում է նախատեսված 55.0 մլն դրամի 109.6%-ը: Նախորդ տարվա համեմատ մուտքերն աճել են 1126.1 հազ.դրամով: Պետական տուրքերի գծով մուտքագրվել է 13613.9 հազ.դրամ՝ պլանավորված 16500.0 հազ.դրամի դիմաց: Կատարողականը կազմել է 82.5%: Այլ հարկային եկամուտների գծով մուտքագրվել է 8750.4 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 97.2%:

Համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների 76.4%-ը կազմել են պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները: 2016 թվականի տարեկան բյուջեի պլանավորված դոտացիայի և սուբվենցիայի գումարները կազմել են 1285697.0 հազ.դրամ, որից հատկացվել է 1283922.0 հազ.դրամ (կատարողականը կազմում է 99.9%):

Այլ եկամուտների գծով 2016 թվականին մուտքագրվել է 40 մլն 326.7 հազ.դրամ՝ պլանավորված 52.0 մլն դրամի դիմաց (կատարողականը կազմել է 77.6%): Հողերի վարձակալության մասով համայնքային բյուջեի եկամուտները կազմել են 6314.4 հազ.դրամ՝ պլանավորված 7500.0 հազ.դրամի դիմաց: Գույքի վարձակալությունից եկամուտների կատարողականը կազմել է 117.8% կամ հավաքագրվել է 4713.3 հազ.դրամ՝ նախատեսված 4.0 մլն դրամի փոխարեն: Հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարների մուտքերը կազմել են 4506.4 հազ.դրամ՝ 5.0 մլն դրամի փոխարեն (հողամասերի կառուցապատման մասով՝ 677.8 հազ.դրամի չափով չվճարված վարձավճարների նյութերը գտնվում են դատարանում): Վարչական գանձումներից մուտքերը կազմել են 20171.6 հազ.դրամ՝ 29.0 մլն դրամի դիմաց (կատարողականը կազմել է 69.6%), տուգանքներից և տույժերից մուտքերը՝ 2274.2 հազ.դրամ, պլանավորված 4.0 մլն դրամի դիմաց (կատարողականը կազմել է 56.9%):

Քաղաքային համայնքի 2016 թվականի տարեկան բյուջեի ծախսերը ֆինանսավորվել են 1680789.7 հազ.դրամի չափով, որը կազմում է պլանավորված 1702398.5 հազ.դրամի 98.7%-ը: Համայնքի ենթակայության կազմակերպությունները ֆինանսավորվել են 99.3 %-ով:

Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

2016 թվականին ընդունվել է քաղաքաշինության բնագավառին վերաբերող 245 որոշում: Շինարարության նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվել է թվով 319 թույլտվություն: Նշված ժամանակաշրջանում քաղաքացիներին միաժամանակ տրամադրվել է 125 ավարտական ակտ և քանդման վերաբերյալ՝ թվով 40 թույլտվություն: Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի և շինարարության ավարտման աստիճանի վերաբերյալ տրամադրվել է 48 տեղեկանք: Հրավիրվել է Ստեփանակերտի վարչական սահմաններում գտնվող ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակը որոշող հանձնաժողովի 6 նիստ, որտեղ քննարկվել է 36 հարց: Ստեփանակերտի քաղաքապետարանին կից գործող

ճարտարապետական և քաղաքաշինական խորհրդի նիստերում քննության է առնվել հասարակական հնչեղության 23 հարց:

Հաշվետու ժամանակահատվածում՝ իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների ապահովման նպատակով, ԼՂՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության հետ համատեղ քաղաքի բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ, ինչպես նաև հասարակական նշանակության շինարարություն իրականացնող սուբյեկտներում պարբերաբար իրականացվել են ստուգումներ: Հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ կապալառուներին տրվել են պարտադիր կատարման հրահանգներ և ցուցումներ: Ստուգումների ժամանակ հայտնաբերված խախտումներն արձանագրվել ու ներկայացվել են վարչական հանձնաժողովի քննարկմանը: Ընդհանուր օգտագործման տարածքներից ապամոնտաժվել կամ համապատասխան վայր են տեղափոխվել թվով 10 հին մետաղյա կրպակներ և ավտոտնակներ:

Տարբեր նշանակության օբյեկտների շինարարության շահագործման փաստագրման վերաբերյալ, հաշվետու ժամանակաշրջանում ձևակերպվել է 125 ակտ: Միաժամանակ հաստատվել են պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված՝ թվով 50 օբյեկտի շինարարության շահագործման փաստագրման ակտեր: Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետները խախտած 315 սուբյեկտ գրավոր ծանուցվել է տրամադրված շինարարության թույլտվությունների ժամկետների երկարաձգման և ավարտական ակտերի ձևակերպման մասին, թվով 350 սուբյեկտ՝ ստացել է գրավոր զգուշացումներ: Բացահայտվել է կառուցվող օբյեկտի ու նախագծային փաստաթղթերի անհամապատասխանության 5 դեպք և շինարարությունը դադարեցնելու վերաբերյալ կազմվել համապատասխան կարգադրագրեր և թվով 6 ակտ-պարտավորագիր: Ընդհանուր օգտագործման տարածքներում և շինարարական հրապարակների շրջակայքում բարեկարգման, անվտանգության կանոնների պահպանման նպատակով, քաղաքացիներին և տնտեսվարող սուբյեկտներին ուղարկվել է թվով 690 ծանուցագիր:

2016 թվականին Ստեփանակերտի քաղաքային համայնքի բյուջեի և պետական բյուջեի միջոցների հաշվին զգալի աշխատանքներ են կատարվել վերանորոգման, վերակառուցման և բարեկարգման ուղղությամբ: Մասնավորապես՝ իրականացվել են բազմաբնակարան շենքերի ճակատային մասերի հարդարման և երեսապատման, հենապատերի և աստիճանների վերանորոգման ու վերակառուցման աշխատանքներ: Ազատամարտիկների փողոցի թիվ 37 շենքի բակում կառուցվել է մանկական խաղահրապարակ: Պատշաճ որակով է իրականացվել Ադմ.Իսակովի թիվ 4ա շենքից՝ Ստարավոյտովա փողոց ձգվող և քաղաքի մի շարք փողոցների բնակելի տների կոյուղու գծերի կառուցումը, ինչը նպաստել է շրջապատի սանիտարական վիճակի բարելավմանը: Պետբյուջեից 10 մլն դրամի չափով շինանյութեր են հատկացվել համայնքի բնակիչներին՝ օգոստոսի 1-ին ուժեղ քամուց տուժած բազմաբնակարան շենքերի վնասված տանիքների վերանորոգման նպատակով: <<Ստեփանակերտի մանկապատանեկան դպրոց>> ՊՈԱԿ-ում իրականացվել են սպորտադահլիճի և սանգանգույցի հիմնանորոգման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում պատվիրվել են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 29 շենքի ճակատային մասի, Ս.Շահումյանի անվան պուրակի մասնակի վերանորոգման, Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 29 և Ա.Մկրտչյան փողոցի թիվ 6 շենքերի հարակից հենապատերի վերակառուցման, Խ.Աբովյան փողոցի թիվ 2ա և Ազատամարտիկների փողոցի թիվ 37 շենքերի բակում խաղահրապարակների կառուցման համար:

Չնայած իրականացված մեծածավալ աշխատանքներին՝ շարունակվում է գերակա մնալ բազմաբնակարան շենքերի տանիքների վերակառուցման և բակերի բարեկարգման խնդիրը: Մայրաքաղաքում հաշվառված 127 բազմաբնակարան շենքերի տանիքներից 47-ը առաջնահերթ վերակառուցման կարիք ունեն: Օրակարգում է մնում Ս.Շահումյանի անվան պուրակի շատրվանների հիմնանորոգման ծրագիրը:

2016թ. մայրաքաղաքում շարունակել է առաջնահերթ մնալ նաև բնակարանային խնդիրը: Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է

քաղաքապետարանի՝ բնակարանային հարցերով հանձնաժողովի 7 նիստ: Հաշվառման ցուցակում ընդգրկվելու համար դիմում է ներկայացրել 13 քաղաքացի, որից 9-ը բավարարվել է, 4-ը՝ մերժվել: Ոչ բնակելի տարածքի հատկացման վերաբերյալ ընդունվել է 7, ուժը կորցրած ճանաչելու մասին՝ 5 որոշում: Համայնքի ավագանու համաձայնությամբ սեփականաշնորհվել է 10 բնակարան, մասնավորեցվել՝ 8 օբյեկտ:

Իրավունքների պետական գրանցում ստանալու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել և ԼՂՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչություն է ներկայացվել ու պետական գրանցում ստացել պետական և համայնքային գույք հանդիսացող 42 միավոր: Միաժամանակ, օտարվել է նախկինում կառուցապատման իրավունքով տրամադրված անշարժ գույքի 8 միավոր: Հասցեների տրամադրման վերաբերյալ ընդունվել է թվով 342 որոշում: Մասնավորապես, ամբողջովին վերահասցեավորվել են Լ.Միրզոյան, Ս.Գորոդեցկի, Ա.Գրաշի, Մ.Սպարապետի, Պ.Սևակի, Բաֆֆու, Շմավոնի, Հ.Սահյան, Հովհ.Աղամյան, Կոմիտասի, Մ.Նալբանդյան, Սուրացանի, Ալ.Սուվորովի, Կամոյի, Հ.Կամարու, Դավիթ Բեկի և Ուլուբաբյան փողոցները, նրբանցքներն ու փակուղիները: Փակցվել են փողոցների և անշարժ գույքի նոր ցուցատախտակներ: Մայրաքաղաքի կենտրոնական փողոցների խաչմերուկներում տեղադրվել են փողոցների ուղեցույցներ:

2016թ. մասնակի բավարարվել են բնակչության պահանջները՝ տների տանիքների վերանորոգման վերաբերյալ: <<Բնակարանային շահագործման տնտեսություն>> ՓԲԸ կողմից ընթացիկ վերանորոգման են ենթարկվել բազմաբնակարան շենքերի թվով 523 բնակարանների և առանձնատների տանիքներ: Նախկինում տեղադրված 280գծ/մ ծավալով անձրևաջրահեռացման խողովակներն ու ջրհորդանները փոխարինվել են նորերով: Թվով 148 բազմաբնակարան շենքերում մաքրվել են ծխնելույզներն ու օդափոխիչ ուղիները: Շարունակական բնույթ են կրել բազմաբնակարան շենքերի մուտքերի հիմնանորոգման, ինչպես նաև նկուղների սանիտարական մաքրման աշխատանքները:

<<Ստեփանակերտի համայնքային ծառայություն>> ՓԲԸ-ն 2016թ. զգալի աշխատանքներ է իրականացրել համայնքի կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների մասով՝ տեղեկատվության խմբագրման, հաշվառման բազայի վարման, համայնքում հասցեավորման և հասցեների գրանցման գործառույթների վերաբերյալ: Համաձայն հաստատված ֆինանսական պլանի, ջրամատակարարման-ջրահեռացման ծառայության գծով նախատեսված 360.0 մլն դրամի փոխարեն հավաքագրվել է 358.0 մլն դրամ: Աղբահանման ծառայության գծով՝ 137920.0 հազ.դրամի փոխարեն հաշվետու ժամանակաշրջանում հավաքագրվել է 133476.0 հազ.դրամ /առաջադրանքը կատարվել է 96.8 տոկոսով/: Բնակչահագործման ծառայության գծով հավաքագրվել է 107854.0 հազ.դրամ, ինչը կազմում է ծրագրվածի 95.9 տոկոսը:

Ծառայությունն իր գործառույթների շրջանակներում կատարել է նաև հասցեավորման և հասցեների գրանցման հետ կապված աշխատանքներ, ինչը թույլ է տվել բազան համալրել գույքային նոր միավորներով: Բնակչության արդյունավետ և անվտանգ սպասարկման խնդրում, անշուշտ, առանցքային նշանակություն ունեն բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգումն ու շահագործումը, ինչին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքապետարանը քաղաքաշինության նախարարության հետ համատեղ մշակել և իրականացրել է <<Ձմեռ>> ծրագիրը: Մայրաքաղաքում ձմռան ամիսներին ակնկալվող դժվարությունները հաղթահարելու, արտակարգ իրավիճակների պայմաններում ձնամաքրման ու ձնահեռացման աշխատանքներն առավել ներդաշնակ համակարգելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով, որում քաղաքապետարանի աշխատակիցներից բացի, ընդգրկվել են նաև շինարարական, կոմունալ ծառայությունների, կենսաապահովման մի շարք այլ կազմակերպությունների պատասխանատուներ: Ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր՝ փոխհամաձայնեցված և արդյունավետ գործելու, քաղաքի փողոցներն ու մայրերը, հրապարակները, հասարակական վայրերը ձյան շերտերից հնարավորինս ազատելու, տրանսպորտի անխափան երթևեկությունն ապահովելու համար:

Ծրագրի շրջանակներում <<Ջերմային տնտեսություն>> ՓԲ ընկերությունն ապահովել է իր կողմից սպասարկվող կաթսայատների անխափան աշխատանքը, մասնավորապես իրականացվել է Ստեփանակերտի հ. 21 կաթսայատան սանգանգույցի կառուցումը: 2016 թվականին վերանորոգման են ենթարկվել մայրաքաղաքի դպրոցների, նախադպրոցական հիմնարկների, կաթսայատների ջերմուղիները, տեղադրվել են շրջանառու նոր պոմպեր, <<Մոր և մանկան բժշկական կենտրոնի>> կաթսայատան գազատար խողովակաշարը փոխարինվել է նորով:

2016թ. ուշադրության կենտրոնում են գտնվել քաղաքի սանիտարական մաքրության և աղբահանման խնդիրները: Կենտրոնական աղբանոցում իրականացված արդյունավետ աշխատանքների շնորհիվ տարածքում իրավիճակը զգալիորեն բարելավվել է: Ստեփանակերտի վարչական տարածքից հավաքվել և աղբանոց է տեղափոխվել շուրջ 17 հազար տոննա կենցաղային ու 235 տոննա շինարարական աղբ: Սանիտարական մաքրման և բարեկարգման է ենթարկվել աղբանոցի ողջ շրջապատը, տարիների ընթացքում կուտակված աղբը խտացվել և վնասազերծվել է, ծածկվել հողի հաստ շերտով: Շարունակվել են աշխատանքները հին աղբանոցի սանիտարական <<մեկուսացման>> ուղղությամբ: Քաղաքի տարբեր թաղամասերում կառուցվել են 5 նոր և հիմնանորոգվել՝ թվով 12 աղբահարթակներ: Ձեռք են բերվել ու տեղադրվել 35 մեծ և 70 փոքր ծավալի աղբարկղներ:

Հաջողությունների հետ մեկտեղ կազմակերպությունում դեռևս չլուծված խնդիրներ կան: Հիմնարկության ավտոտնտեսությունը թարմացման խիստ կարիք ունի: <<ԳԱԶ-3307>> աղբահավաք կողաբարձիչ, <<ԿԱՄԱԶ>> ձևահավաք-աղցան կամ ԶԻԼ-ՄԴԿ մակնիշի ավտոմեքենաների, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի բակերի և մայթերի ձևահավաք մինի տրակտորների ձեռքբերումն առավել արդյունավետ կդարձնեք մայրաքաղաքի սանմաքրման և աղբահանման աշխատանքների կազմակերպումը:

2016թ. <<Զրմուղ կոյուղի>> ՓԲԸ գործունեությունը նպատակաուղղված է եղել Ստեփանակերտ քաղաքի բնակչության ջրամատակարարման և կոյուղու ցանցերի սպասարկման ծառայության որակի բարձրացմանը, ինչպես նաև գործող անձրևընդունիչների աշխատունակության ապահովմանը: Հատկանշական է, որ

այսօր քաղաքի բնակչության գրեթե 100 տոկոսն ապահովված է շուրջօրյա ջրով: Ջրացանցի կառուցման աշխատանքները կշարունակվեն առաջին և երրորդ գոտիների՝ Աջափնյակ և Կրկեան թաղամասների որոշ հատվածներում ու տարեվերջին ավարտին կհասցվեն: Ջրառների, գոիչ կայանների, ջրատարների, արտեզյան հորերի և պոմպերի, ներքաղաքային ջրացանցի անխափան գործունեությունն ապահովելու և ջրարտադրության ինքնարժեքը նվազեցնելու նպատակով իրականացվել են մի շարք աշխատանքներ:

Մայրաքաղաքում շուրջօրյա ցանցից սնվում են շուրջ 60 աղբյուր և ցայտաղբյուր: Տարվա բոլոր եղանակներին, այդ թվում՝ ձմռան և ամռան ամիսներին, ընկերությանը հաջողվել է ապահովել ջրի անխափան մատակարարումը բնակչությանը: Մեծածավալ աշխատանքներ են իրականացվել շուրջօրյա ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների վերացման ուղղությամբ՝ ինչպես ներքաղաքային ջրացանցում, այնպես էլ ներքաղաքային կոյուղու ցանցում, կոյուղու և բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի և ջրամատակարարման ներքին ցանցերում: Ջրի որակի ապահովման նպատակով լաբորատորիայի կողմից պարբերաբար իրականացվել են առողջարարական մի շարք միջոցառումներ: Ձնհալների և հորդառատ անձրևների հետևանքները վերացնելու և ջրի որակը պահանջվող չափանիշներին համապատասխանելու համար լրացուցիչ կազմակերպվել է ինչպես ՕԿՁ-ի, այնպես էլ՝ աղբյուրների ամենօրյա ախտահանում և վարակազերծում: Տարվա ընթացքում, ըստ ժամանակացույցի, նմուշահանվել և հետազոտվել են «Վարարակն», «Մեղրագետ», «Թրագետ» գետերի ջրերը, ախտահանվել ու վնասազերծվել ակունքները: Հաշվետու ժամանակաշրջանում ընկերության միջոցներով իրականացվել են շուրջ 68 մլն դրամի հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Միևնույն ժամանակ, ընկերությունում խնդրահարույց հարց է մնում ավտոտնտեսության համալրումը նոր տեխնիկայով: Քաղաքի կոյուղու համակարգը ենթակա է վերակառուցման: Մի շարք թաղամասերում և փողոցներում պահանջվող չափանիշներին չի համապատասխանում անձրևահեռացման համակարգը, առանձին հատվածներում ընդհանրապես բացակայում են

կոյուղագծերը, ինչը լրջորեն վտանգում է շրջակա տարածքների սանիտարական վիճակը: Օրախնդիր են մնում ջրառների և ՕԿՁ-ների՝ զինված պահակախմբերի ապահովման, Մեղրագետի պոմպակայանից մինչև ջրառ ինքնահոս ջրագծի կառուցման հարցերը:

Տարին արդյունավետ է եղել «Ակադեմիկոս Թախթաջյանի անվան բուսաբանական այգի» ՓԲԸ համար: Քաղաքի տարբեր փողոցներում ու թաղամասերում իրականացվել են կանաչ գոտիների և տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ: 2016թ. նախորդ տարվա համեմատ կանաչ գոտիներն ընդլայնվել են ավելի քան 1440 քառ.մետրով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ոռոգման ցանցերի ընդլայնման, նորերի ստեղծման լայնածավալ աշխատանքներ, ինչը նպաստել է կանաչ տարածքների բարելավմանը: Ընդհանուր առմամբ, մայրաքաղաքում տնկվել է տարբեր տեսակի ավելի քան 1000 ծառ: Սիզամարգերում կատարվել է ավելի քան 630 հազար ծաղկի սածիլների տունկ, որից 55 հազարը ներմուծվել է Երևանից: Միամայակի շրջանակներում ծառատնկման ու սանիտարական մաքրման ուղղությամբ հատկապես լայնածավալ աշխատանքներ են կազմակերպվել «Աջափնյակ» և «Արեշ» թաղամասերում: Քաղաքապետի որոշմամբ ընկերության կողմից իրականացվել է 62 ծառահատում: Ձևավորվել է ավելի քան 960 և երիտասարդացվել՝ թվով 520 ծառ: Կատարված աշխատանքների հետ մեկտեղ, մինևույն ժամանակ որոշ հարցեր տակավին մնում են չլուծված: Հատկապես ամռան շոգ եղանակներին սիզամարգերի և տնկիների արդյունավետ ոռոգման համար խիստ զգացվում է ջրցան նոր մեքենաների անհրաժեշտությունը:

2016թ. «Արցախեներգո» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղի հետ համատեղ իրականացվել են մայրաքաղաքի փողոցների, բակերի, խաղահրապարակների, զբոսայգիների արտաքին լուսավորման ցանցի շահագործման, պահպանման, վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ: ԼՂՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող կապիտալ ներդրումների ծրագրի շրջանակներում, ապամոնտաժվել են Աջափնյակ թաղամասի 10 կմ երկարությամբ օդային հին գծերը, վերակառուցվել արտաքին լուսավորման համակարգը: Վերակառուցվել է նաև Ուլուբաբյան փողոցի փակուղու

արտաքին լուսավորման համակարգը, տեղադրվել են էներգախնայող նոր լուսատուներ: Ստորգետնյա և օդային վթարված մալուխային գծերը փոխարինվել են ժամանակակից նոր գծերով: Մայրաքաղաքի չլուսավորվող հատվածներում իրականացվել են համապատասխան մոնտաժային աշխատանքներ, տեղադրվել են նոր լուսատուներ և հենասյուներ: Վերանորոգվել է 1900 լուսատու, մի շարք ենթակայաններում տեղադրվել են էլեկտրական նոր սարքավորումներ: Հաշվի առնելով մայրաքաղաքի արտաքին լուսավորման աշխատանքների համակարգման ու էլեկտրաէներգիայի խնայողաբար օգտագործման անհրաժեշտությունը՝ փողոցներում հին լամպերը փոխարինվում են նորերով, պարբերաբար վերահսկվում է լուսավորման համակարգի միացման-անջատման ռեժիմը:

Հողօգտագործում

2016թ. հասարակական նշանակության, անհատական տների և արտադրական նշանակության օբյեկտների կառուցման համար ընդունվել է թվով 159 որոշում, պետական /համայնքային/ սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ կնքվել՝ 48 պայմանագիր: Հողամասի վարձակալության համար կնքվել է 4, հողամասի ու անշարժ գույքի առուվաճառքի տրամադրման վերաբերյալ՝ թվով 164 պայմանագիր: Անց է կացվել Ստեփանակերտ քաղաքի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի թվով 8 բաց աճուրդ: ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության հետ համաձայնեցվել է կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվությունը:

Շարունակվել է ԼՂՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության Ստեփանակերտի բաժնի հետ համատեղ աշխատանքը՝ պետական գրանցման ժամանակ առաջացած սահմանային անճշտությունների վերացման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային խմբի կողմից տրվել է թվով 5 մասնագիտական եզրակացություն: Հողերի նպատակային նշանակության /կատեգորիայի/ փոփոխման համար կատարվել են նախապատրաստական աշխատանքներ: Հատկացված հողամասերի վերաբերյալ տեղեկատվական բազան համալրվել է անհրաժեշտ տվյալներով:

Տրանսպորտ

Ստեփանակերտ քաղաքում ուղևորափոխադրումներն իրականացվում են թվով 5 ավտոբուսային, 3 միկրոավտոբուսային և մեկ հատուկ երթուղիների միջոցով, որոնք պայմանագրային հիմունքներով սպասարկվում են «Ստեփանակերտ-սերվիս» ՓԲԸ և «Մհեր» ՍՊԸ-ի կողմից: Հաշվետու ժամանակաշրջանում մի շարք երթուղիներում կազմակերպվել են շարժակազմերի համալրման աշխատանքներ: Ուսումնասիրվել և պարբերաբար ստուգվել է ընկերությունների կողմից ստանձնված պարտավորությունների կատարման ընթացքը, և տրվել են համապատասխան ցուցումներ՝ երթակարգավարական ծառայության բարելավման, շարժակազմերի արդյունավետ օգտագործման և ուղևորափոխադրման որակի բարելավման նպատակով: Սակայն աշխատանքների կազմակերպման ընթացքում ծագում են ոչ քիչ թվով խնդիրներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում բնակչության արդյունավետ սպասարկման համար: Դեռևս լիարժեք համալրված չէ մայրաքաղաքի ավտոբուսային /միկրոավտոբուսային/ հավաքակազմը: Հատկապես շարունակում է ցածր մնալ հաշմանդամների տրանսպորտային սպասարկման մակարդակը:

Հաշվի առնելով վերջին տարիներին մայրաքաղաքում ավտոտրանսպորտային հոսքի միտումները և մի շարք երթուղիներում ուղևորահոսքի տատանումները՝ անհրաժեշտություն է ծագում քաղաքային երթուղային ցանցում ավելացնել ավտոբուսային երթուղիների քանակը զուգահեռաբար նվազեցնելով միկրոավտոբուսների թիվը: Իրավիճակի շտկման և կարգավորման գործում ակնկալում ենք Էկոնոմիկայի նախարարության տրանսպորտային տեսչության կողմից վերահսկողության ուժեղացում՝ ոլորտում օրենսդրական պահանջների կատարման, հաստատված չվացուցակների ապահովման, երթուղու ուղեգծի ինքնակամ շեղումների բացառման, ավտովարորդների կողմից ուղևորների հանդեպ հարգալից վերաբերմունքի դրսևորման և անվտանգ սպասարկման ուղղությամբ:

Ելնելով ճանապարհային երթևեկության բարելավման և անվտանգության ապահովման պահանջներից, ինչպես նաև՝ համաձայն Ստեփանակերտ քաղաքի լուսացույցերի սպասարկման պայմանագրի, ԼՂՀ ԿԱ ԼՂՀ ոստիկանության

Ճանապարհային ոստիկանության համապատասխան մասնագետների հետ վերահսկվել է քաղաքում գտնվող լուսացուցային օբյեկտների վերանորոգման և սպասարկման աշխատանքների գործընթացը: Էլեկտրաէներգիայի խնայման նպատակով թվով 7 լուսացուցային օբյեկտների կառավարման սարքերը փոխարինվել են նորերով, կատարվել է մայրաքաղաքի ավտոճանապարհների հորիզոնական գծանշում, ճանապարհային հին նշանները փոխարինվել են նորերով:

Ճանապարհային անվտանգ երթևեկության ապահովման կարևոր պայմաններից է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցների տարեկան տեխզնումը: Ստեփանակերտ քաղաքում հաշվառված 10 հազար 585 փոխադրամիջոցներից, ըստ տեխնիկական զննության կայանի տվյալների, 2016թ. զննություն է անցել 6310 փոխադրամիջոց: Միննույն ժամանակ, 4275 փոխադրամիջոց չի անցել տեխնիկական զննություն, ինչի արդյունքում փաստացի վտանգվել է երթևեկությունը, պետական և համայնքային բյուջե չեն մուտքագրվել զգալի ֆինանսական միջոցներ:

Աշխատանք և սոցիալական ծառայություն

2016թ. նպաստ ստանալու նպատակով հաշվառման է վերցվել 1081 քաղաքացի: Պետական նպաստից օգտվում է 3340 նպաստառու, որոնց տարվա կտրվածքով վճարվել է 808972.0 հազար դրամ: Հաշվառման է վերցվել և խնայբանկում հաշիվ բացվել բազմազավակ ընտանիքներում ծնված 3-րդ և հաջորդ՝ 229 երեխայի համար: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման նպատակով հաշվառման է վերցվել 934 գործ /ֆինանսավորման գումարը կազմել է 238300.0 հազար դրամ/: Հաշվետու ժամանակաշրջանում ամուսնության միանվագ նպաստի համար վճարվել է 90.0 մլն դրամ: ԼՂՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքներին տրամադրվել է շուրջ 169.0 մլն դրամի միանվագ գումար: Հիշարժան օրերի կապակցությամբ բնակչության առանձին խմբերի վճարվել է ավելի քան 90.0 մլն միանվագ գումար՝ 2191 ընտանիքի հաշվով:

32 նպաստառուի տրամադրվել են պրոթեզավորման պարագաներ, այդ թվում՝ թիկնասայլակ, լսողական սարք և այլն:

Առևտուր և ծառայություն

Հաշվետու ժամանակահատվածում, օրենքով սահմանված կարգով, համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել է 562, առևտրի և հանրային սննդի օբյեկտները ժամը 24,00-ից հետո աշխատացնելու համար՝ 5, բացօթյա առևտուր իրականացնելու համար՝ 159, շրջիկ առևտուր իրականացնելու համար՝ 495, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի համար՝ 14, տեխնիկական հեղուկների վաճառքի համար՝ 27, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար՝ 24 և մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու համար՝ 62 թույլտվություն:

Պարբերաբար ուսումնասիրվել է տեղական տուրքերի գանձման ընթացքը, դիտարկվել տեղական տուրք վճարող սուբյեկտների գործունեությունը, կատարվել իրավիճակի վերլուծություն: Օրենսդրական պահանջներն ապահովելու, հետիոտնի և տրանսպորտի երթևեկին չխոչընդոտելու, քաղաքի գեղագիտական տեսքը պահպանելու, փողոցներում հակասանիտարական վիճակ չստեղծելու և բնակչության առողջությունը չվտանգելու նպատակով խստորեն վերահսկվել է բացօթյա ապօրինի առևտուրը և կանոնակարգվել օրենքով թույլատրվող ապրանքների վաճառքը: Համապատասխան ծառայությունների հետ համատեղ ստուգումներ են իրականացվել առևտրի և հանրային սննդի օբյեկտներում՝ պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ և խախտումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

2016թ. քաղաքապետարանին կից գործող վարչական հանձնաժողովի կողմից ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելու համար տուգանվել է 48, առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելու համար՝ 4,

շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար՝ 2, պետական համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու համար՝ 2, պիտանիության ժամկետն անցած ապրանքներ վաճառելու համար՝ 7, ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնները խախտելու և շինությունը ոչ նպատակային օգտագործելու համար՝ 1 անձ:

2016թ. քաղաքի հասարակական նշանակության օբյեկտներում աշխատանքներ են տարվել գովազդային միջոցները գործող կանոնների պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Տուրքի մասով, գովազդի թույլտվության համար առաջադրանքը կատարվել է 117.4 տոկոսով: 11890.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 13959.0 հազար դրամ: Համայնքի տարածքում գովազդի տեղադրման կարգին ու պայմանագրին ծանոթանալու և համապատասխան թույլտվություն ստանալու նպատակով, համայնքի ավելի քան 140 գովազդատուների ուղարկվել են գրություններ: Արտաքին գովազդի օրինականացման հարցով դիմել և համապատասխան որոշումներ է ստացել թվով 84 գովազդատու, որից 33-ը՝ արտաքին գովազդ տեղադրելու համար: 20-ը ուժը կորցրած է ճանաչվել: Քաղաքապետի որոշման համաձայն, մինչև մեկ ամիս ժամկետով թույլտվություն է ստացել 12 գովազդատու: Ստեփանակերտ քաղաքում գովազդի տեղադրման համար, ընդհանուր առմամբ, կայացվել է ավելի քան 90 որոշում: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է համայնքի փողոցներում տեղադրված ոչ պիտանի գովազդների ապամոնտաժման ծրագիր: Արդյունավետ աշխատանքներ են տարվել, մասնավորապես, տոն օրերին մայրաքաղաքի արտաքին ձևավորումը պատշաճ հիմքերի վրա դնելու ուղղությամբ: Տեսարժան վայրերում տեղադրված էկրանների միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռնվել ծանոթանալու քաղաքապետարանի կողմից պատրաստված տեսահոլովակներին և շնորհավորական ուղերձներին:

Հասարակական կարգի պահպանություն

2016թ. ԼՂՀ ոստիկանության քաղաքային վարչությունն ակտիվորեն համագործակցել է քաղաքապետարանի հետ: Համայնքում կատարված իրավախախտումների վերաբերյալ քաղաքապետին պարբերաբար տրամադրվել է

անհրաժեշտ տեղեկատվություն: Կարևորելով հասարակական կարգի պահպանման գործում ոստիկանական հենակետերի առկայությունը՝ քաղաքապետարանը քաղաքի կենտրոնական մասում՝ Աբովյան փողոցի թիվ 2 հասցեում, ձեռք է բերել անշարժ գույք և տրամադրել ոստիկանության քաղաքային վարչությանը՝ նպատակային օգտագործման համար:

Պաշտպանություն

Առաջնորդվելով 2016թ. քաղպաշտպանության հիմնական միջոցառումների պլանով, ինչպես նաև ՔՊ պետի ու ղեկավար մարմինների որոշումներով և կարգադրություններով, համապատասխան գործունեություն է ծավալվել Ստեփանակերտի ՔՊ համակարգում՝ բնակչության և տարածքների պաշտպանության խնդիրների լուծման ուղղությամբ: Ճշգրտվել է Ստեփանակերտի ՔՊ պլանը և խաղաղ ժամանակի ՔՊ ուժերի և միջոցների, բնակչության պատասպարման հաշվարկը: Հաշվետու ժամանակաշրջանում, ընդհանուր առմամբ, քաղաքի տարածքում անցկացվել է 20 զորավարժություն:

Արտակարգ իրավիճակներում բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով, նաև ապրիլյան հայտնի իրադարձություններով պայմանավորված, զգալի աշխատանքներ են իրականացվել բազմաբնակարան շենքերի նկուղների վերանորոգման ու մանրազերծման /ախտահանման/ ուղղությամբ: Ծրագրի շրջանակում, մասնավորապես, վերանորոգման են ենթարկվել ու կահավորվել թվով 142 բազմաբնակարան շենքերի նկուղային հարկեր՝ վերածվելով անվտանգ ապաստարանների:

Քաղպաշտպանության կողմից բավարար աշխատանքներ են տարվել համայնքի տարածքում հակահրդեհային միջոցառումների ապահովման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում Ստեփանակերտում գրանցվել է 128 հրդեհի դեպք կամ նախորդ տարվա համեմատ հիշյալ արտակարգ պատահարների թիվը նվազել 118-ով: Հիմնականում հրդեհների աճ է գրանցվել բուսածածկ տարածքներում, ինչին գլխավորապես նպաստել է երաշտը: Մայրաքաղաքում հրդեհների հետևանքով հասցված վնասի չափը կազմել է 2 մլն 829 հազար դրամ:

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

2016թ. ԼՂՀ դատարաններում ապահովվել է Ստեփանակերտի քաղաքային համայնքի լիազոր ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստերին: Ընդդեմ Ստեփանակերտի քաղաքապետարանի հարուցված քաղաքացիական 2 գործերով հայցապահանջներն էլ մերժվել են: Թվով 5 վարչական գործերով /հողհատկացման, բնակարանային հերթում հաշվառելու և սեփականաշնորհման վերաբերյալ/ 12 հայցապահանջներից 2-ը բավարարվել է, մեկ գործով վարույթը կարճվել է՝ հայցվորների հայցից հրաժարվելու հիմքով, 2 գործով՝ մերժվել: 39 քաղաքացիական գործերով ապահովվել է մասնակցությունը դատական նիստերին՝ որպես երրորդ անձի ներկայացուցիչ: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում հրավիրվել է հանձնաժողովի 31 նիստ: Կայացվել է 52 որոշում՝ անչափահասի գույքի օտարման, պատրոնաժ, խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու մասին: Երեխաների շահերին վերաբերող դատական գործերով տրվել է 32, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու մասին՝ 2, հաստատությունից դուրս գրելու մասին՝ 3 եզրակացություն: Երեխայի որդեգրման վերաբերյալ /որպես որդեգրել ցանկացող անձի/, տրվել է 1 դրական եզրակացություն և որպես որդեգրման ենթակա հաշվառման է վերցվել 1 երեխա: Իրավախախտում կատարած 39 անչափահաս վերցվել է հաշվառման, իսկ 42-ը՝ հանվել հաշվառումից: Աշխատանքներ են տարվել Ստեփանակերտի քաղաքային համայնքի կողմից ընդունվող որոշումներն ու կարգադրությունները Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Պարբերաբար կատարվել է քաղաքացիների ընդունելություն, տրվել են իրավաբանական խորհրդատվություններ և պարզաբանումներ: Հարցերի լուծման նպատակով քաղաքացիներն համապատասխան առաջարկություններով ուղղորդվել են լիազորված մարմիններ:

2016թ. ԼՂՀ Նախագահի և կառավարության աշխատակազմերից, ԼՂՀ Ազգային ժողովից և ԼՂՀ պետական այլ կառույցներից, ինչպես նաև քաղաքացիներից ստացվել են 2249 գրություն և դիմում-բողոք: Նշված ժամանակահատվածում ընդունվել են քաղաքապետի 2214 որոշում և 281

կարգադրություն, համայնքի ավագանու 60 որոշում: Ամենատարբեր հարցերով քաղաքապետի մոտ ընդունելության է գրանցվել շուրջ 1500 քաղաքացի: Տարվա կտրվածքով մուտքագրվել են ԼՂՀ 56 օրենք, ԼՂՀ Նախագահի 2 հանձնարարական, ԼՂՀ վարչապետի և կառավարության 83 որոշում, ԼՂՀ վարչապետի 3 արձանագրային հանձնարարական, որոնք սահմանված կարգով ծանոթացման են ներկայացվել աշխատակազմի պատասխանատու աշխատողներին, և իրականացման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ: Սահմանված կարգով ժամանակին հաշվառվել են ելից գրությունները, կազմակերպվել՝ վերջիններիս առաքումը հասցեատերերին:

Օրենքի շրջանակներում համակարգվել են քաղծառայողների վերապատրաստման, ատեստավորման և մրցույթի կազմակերպման հետ կապված աշխատանքները: Անց է կացվել 1 մրցույթ, ատեստավորվել՝ 25 քաղծառայող: 21 քաղծառայող անցել է վերապատրաստման դասընթացներ:

Կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել սովորողների կրթության գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու, հիմնարկների նյութատեխնիկական բազան հարստացնելու, նոր տեխնոլոգիաների մուտքը համակարգ խթանելու, ուսումնական պարապմունքների, արտադասարանական-արտադպրոցական և սպորտային միջոցառումների նպատակային կազմակերպման ուղղությամբ:

Հանրակրթական առարկաների նկատմամբ հատուկ կարողություններ ունեցող և առանձնակի հետաքրքրություն ցուցաբերած սովորողների վերհանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ՝ աշակերտների շրջանում հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով, 15 ուսումնական առարկաներից կազմակերպվել են օլիմպիադաներ, որոնց արդյունքներով քաղաքային փուլում՝ 157, հանրապետական փուլում՝ 69, իսկ ՀՀ-ի եզրափակիչ փուլում՝ 31 մասնակիցներ գրավել են մրցանակային տեղեր, խրախուսվել գովասանագրերով, պատվոգրերով և դիպլոմներով:

Մայրաքաղաքի կրթական հաստատությունները հիմնականում ապահովված են բարձրագույն մանկավարժական և համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող կադրերով: Աշխատող 922 մասնագետից 866-ն ունի բարձրագույն, իսկ 48-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն: Ուսուցիչների մասնագիտական, մեթոդական ու մանկավարժական վարպետության բարձրացման նպատակով 144 ուսուցիչ-մասնագետ ընդգրկվել է վերապատրաստման դասընթացներում:

Հաշվետու ժամանակահատվածում ուշադրության կենտրոնում են գտնվել սովորողների հայեցի դաստիարակության ուղղությամբ տարվող հարցերը: Կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ՝ սովորողների գիտական մակարդակի բարձրացման, գիտակցական կարգապահության, հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակության ապահովման նպատակով: Անց են կացվել «Վերջին զանգ», «Առաջին զանգ», «Ուսուցչի օր», «Ոսկե աշուն», «Մայրենիի օր», «Այբուբենի տոն», «Անկախության օր», «Ստեփանակերտի օր», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն զինղեկ», «Տարվա լավագույն դաստիարակ», «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթները, ինտելեկտուալ խաղեր, ասմունքի ու ստեղծագործական շարադրությունների մրցույթներ և այլ տարաբնույթ միջոցառումներ, որոնց արդյունքներով հաղթող ճանաչվածները խրախուսվել են:

Կազմակերպված է անցել դպրոցականների ամառային հանգիստը: Շուշիի «Հայկի սերունդ» ճամբարում ընդգրկվել է 150, Սևանի երկրապահների միության ճամբարում՝ 35, Ծաղկաձորի ճամբարում՝ 55 երեխա: Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի և Ստեփանակերտ քաղաքի միջև համագործակցության և բարեկամության ծրագրի շրջանակներում, Հայոց մեծ եղեռնի 101-րդ տարելիցի կապակցությամբ Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների 11 աշակերտ՝ զոհված ազատամարտիկների և բազմազավակ ընտանիքներից, հրավիրվել է Երևան ու մասնակցել տարբեր միջոցառումների: Նրանք մասնավորապես մկրտվել են Նորք-Մարաշ վարչական շրջանի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցում: Հատկանշական է, որ երեխաների հանգստի ու կեցության հետ կապված բոլոր

խնդիրները հոգացել են քաղաքապետարանի և վարչական շրջանի պատասխանատուները, ովքեր փաստացի համարվում են մկրտված աշակերտների կնքահայրերը: Մայիս ամսում Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հրավերով Ստեփանակերտի 10 հանրակրթական դպրոցներից մեկական աշակերտ և ուսուցիչ նույնպես հյուրընկալվել են Հայաստանի մայրաքաղաքում: Նրանք հնարավորություն են ունեցել շփվելու մի շարք դպրոցների իրենց հասակակիցների հետ, լինելու թանգարաններում և հիշարժան այլ վայրերում, վառ տպավորություններով վերադառնալու տուն:

Ուշադրության կենտրոնում են գտնվել սովորողների ֆիզիկական դաստիարակության, սպորտի և ռազմամարզական խաղերի հետագա մասսայականացման հարցերը: Այդ նպատակով կազմակերպվել ու անց են կացվել տարաբնույթ քաղաքային առաջնություններ և մրցույթներ /<<Արծվիկ>> ռազմականացված հնգամարտ, հրաձգություն՝ ավտոմատ Կալաշնիկովից, <<Պատանի փրկարարներ>> և այլն/, որտեղ մեր մարզիկները գրավել են մրցանակային տեղեր:

Ընդհանրացվել են ուսումնական հաստատությունների տնօրենությունների, առարկայական մեթոդափափորումների կողմից կատարված աշխատանքները և քննարկվել ուսուցիչների օգոստոսյան խորհրդաժողովում, ուր մատնանշվել են նոր՝ 2016-2017 ուս.տարվա անելիքներն ու խնդիրները: Հաշվետու ժամանակաշրջանում մայրաքաղաքում նախադպրոցական հիմնարկների թիվն ավելացել է ևս մեկով: Շահագործման է հանձնվել հ. 6 մանկապարտեզը, հ. 4 մանկապարտեզը համալրվել է 2 խմբով: Հաճելի նվեր են ստացել հ.12 դպրոցի աշակերտները, ուր գործում է ջեռուցման նոր համակարգ: Ընթացքի մեջ են հ. 9 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները: 2017թ. առաջնահերթ կմնան հ.10 հիմնական դպրոցի հիմնարար վերանորոգման և կահավորման հարցերը:

2016թ. հազեցած է եղել նաև մայրաքաղաքի մշակութային կյանքը: ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ քայլեր են ձեռնարկվել մշակութային միջոցառումների որակի բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ, իրականացվել են մի շարք նոր

ծրագրեր: Պատշաճ մակարդակով են անցել Ամանորին, Սուրբ Սարգիս զորավարի տոնին, Հայրենյաց պաշտպանի և Արցախի վերածննդի օրվան, Մայիսյան եռատոնին, ԼՂՀ անկախության հռչակման տարեդարձին, Ստեփանակերտի օրվան ու Երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջոցառումները: Մշակույթի քաղաքային տան և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ նշվել են «Տրնդեզն» ու «Սուրբ Զատիկը»: Կազմակերպվել են երգի և ասմունքի փառատոներ, տոնական համերգներ ու մի շարք ցուցահանդեսներ: Ավանդույթ է դարձել երիտասարդական արշավների կազմակերպումը՝ Արցախի պատմամշակութային հուշարձաններ ու վանքեր, որոնք վերածվում են յուրահատուկ ուխտագնացության: Շարունակվել է ակտիվ համագործակցությունը՝ երիտասարդական, ստեղծագործական և հասարակական կազմակերպությունների հետ: Մայրաքաղաքի մշակութային կյանքում արձանագրված նշանակալի իրադարձությունների շարքում կարելի է առանձնացնել Մայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի և Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի նոր մասնաշենքերի շահագործումը, որոնք հաճելի նվեր են հանդիսանում արվեստասերների համար:

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

2016թ. մարզական միջոցառումներն իրականացվել են նախապես հաստատված աշխատանքային օրացուցային պլանով: Տարբեր մարզաձևերից քաղաքային առաջնություններում առաջնակարգ տեղեր գրաված թիմերը մասնակցել են հանրապետական մրցումներին: Ավանդական են դարձել հիշարժան օրերին նվիրված տոնական մարզական միջոցառումները, որոնք, մասնավորապես, անց են կացվում Հայրենիքի պաշտպանի օրվա, Մայիսյան եռատոնի, Անկախության օրվա, Քաղաքի և Ֆիզկուլտուրնիկի օրվա կապակցությամբ: Ստեփանակերտ քաղաքում անցկացվել են մարզական փառատոներ և «Լավագույն մարզական ընտանիք» մրցումներ: Կոլեկտիվների միջև կազմակերպված բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի, հանդբոլի թիմային մրցումների ժամանակ ի հայտ են բերվել Ստեփանակերտի լավագույն թիմերը, որոնք մասնակցել են հանրապետական առաջնություններին: Ստուգատես-մրցույթում 1-

ին պատվավոր տեղը գրաված թիմերը քաղաքապետարանի կողմից արժանացել են նվերների և պատվոգրերի:

Արտաքին կապեր

Տարեցտարի ընդլայնվում է մայրաքաղաքներ Երևանի և Ստեփանակերտի համագործակցությունը: 2012թ. սեպտեմբերի 28-ին երկու մայրաքաղաքների քաղաքապետների կողմից ստորագրված համաձայնագրի շրջանակում բոլոր ուղղություններով ավելի են սերտանում կապերը: Երևանի քաղաքապետարանն ակտիվ աջակցություն է ցուցաբերում քաղաքային տնտեսությանը՝ կառավարման ոլորտում: Այն իր փորձն է հաղորդում քաղաքապետարանի բաժիններին՝ գործառույթների կատարելագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, եկամուտների հաշվառման և հավաքագրման, հարկային դաշտի ուսումնասիրման և այլ բնագավառում:

Հատկանշական է, որ փոխգործակցությունը չի սահմանափակվում երկու քաղաքապետարանների պատասխանատուների փոխայցելություններով և Ստեփանակերտի հետ ամուր կապեր են հաստատել նաև Երևանի վարչական բոլոր 12 շրջանները: 2016թ. համագործակցության շրջանակներում պատվիրակությունների կողմից շուրջ չորս տասնյակ փոխայցելություններ են կատարվել և հստակեցվել անելիքները, նախանշվել առաջնահերթությունները: Քայլեր են ձեռնարկվում գործընկերային հարաբերություններն առավել սերտացնելու և կայուն հիմքերի վրա դնելու համար:

Երկու քաղաքապետարանների համագործակցության արդյունքում է ծնունդ առել Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Ստեփանակերտում <<Ազատամարտիկների այգու>> հիմնադրման և Աստվածամոր Սուրբ Հովանի մայր տաճարի հարակից տարածքների բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ իրականացնելու մտահղացումը: Երևանի քաղաքապետարանն առաջիններից մեկն է արձագանքել անցյալ տարվա ապրիլին՝ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի հետևանքով տուժած Արցախին աջակցություն ցուցաբերելու կոչին՝ հաշված ժամերի ընթացքում Ստեփանակերտ ուղարկելով

ավելի քան 100 տոննա առաջին անհրաժեշտության ամենատարբեր տեսակի մթերքներ:

Որպես երկու մայրաքաղաքների միջև կապերի սերտացման և ժողովուրդների անկաշկանդ հաղորդակցման ու բարեկամության ամրապնդման միջոց կարելի է համարել մշակութային և մարզական միջոցառումների համատեղումն ու արշավների կազմակերպումը, որոնք թույլ են տալիս ավելի հաճախակի դարձնել շփումներն ու լավ ճանաչել միմյանց, ամառային հանգիստն անցկացնել Արցախի գեղատեսիլ բնության գրկում, հաղորդակցվել պատմամշակութային հուշարձաններին և նպաստել զբոսաշրջության զարգացմանը:

Երևանի ու Ստեփանակերտի միջև բարեկամության և կապերի ամրապնդմանը նոր լիցք կհաղորդի երկու քաղաքապետների կողմից ստորագրված 2015-2020թթ. համագործակցության ծրագիրը, ինչը լայն հեռանկարներ է խոստանում: